

րապետս մեր, զի արձակեսցէ զկապեալսն: Եւ
 Հայրապետս մեր եւս գրեաց Սարասկեարին
 զորպէսն եւ նորին ձեռամբն ի Կարս դատաւո-
 րօք եւ մեծամեծ իշխօղօքն Կարսայ վերստին
 էառ գիր ի բերանոց հետեւընցն տաճկեմար, զի-
 մի եւս երեւեցուցին ի յինքեանս զնշան ակ-
 թարմայութեան: Ապա գրեաց վերստին ի Պօլիս,
 եւ ետ բերել զարձակման ֆարմանն, եւ դար-
 ձոյց զնոսա յԱխալցխայ ի ՌՄԻ թուողն մե-
 րում:»

Կ'երեւայ թէ Գէորգ Եպս. ի Պօլիս հե-
 տախուզուած եւ հալածուած է. վասն զի
 ապաւինած էր Ղատինաց մէկ վանքը, հաւանա-
 րար Քափուչիններու Բերայի Սէն Լուի վանքը,
 ուր եւ իբր 1765ին վախճանած է:

Այս պարագայն Ջամըռ գրքին մէջ
 (էջ 41) կը կարդանք սա ձեւով. «Մինչ այս
 ֆարմանաց գալն՝ վերոյիշեալ Հայրապետս մեր
 զչիք Գէորգն բանագրեաց, եւ նա լսելով մա-
 նաւանդ զֆարմանաց հանելն, փախեաւ գաղտ
 յԱխալցխու ի Պօլիս ի Բեկօղլին առ Փոռանկսն,
 եւ անդ սատակեցաւ ի նոյն ամին:»

Աւելի մանրամասնութիւններ Գէորգ Եպ. ի
 մասին անձանօթ կը մնան տակաւին: